

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 փր.
սահմանային	6 "
վեցամսեայ	6 "
Արտասահմանի	
համար սահմանային	15 "
վեցամսեայ	8 "
Անկախի համար	
սահմանային	3 ֆր.
վեցամսեայ	1 50 "

Իմանուղևան տղոց անու  
 թիւն երեսին համար 40 ս.  
 իսկ վիշիթիւն երեսին հա-  
 մար 20 սակրիսիւն երե-  
 թիւն աւելի ակազակներու  
 համար 20 0/0 գեղջ կըլ-  
 յայ :

Վառնայի համար  
 ձեռք 40 սակրիսիւն

# ՇԱՐՈՒՄ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ՔԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱՍԱՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱՅՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalmencarian  
 (Aubriche)  
 W. 4.  
 Meschiharistengasse  
 Vienne

Նախնի կէ դրամ դրկիւն  
 խաղաղութեան հաս-  
 ցիկն

Редакция на вѣстникѣ  
 „Шаржумъ“  
 Варна

Redacti n du journal  
 „Char.oum“  
 (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար  
 ձեռք 15 ՍԱԼԹԻՄ

Արտասահմանի համար  
 ձեռք 20 ՍԱԼԹԻՄ

Գրութիւնք և՛ յԱՍՏՈՒՐ

«ՇԱՐՈՒՄ» Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՎԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆՈՒՄ ՎՃԱՐԷ



### ՎԱՀԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Ի՞նչ է գեա ողջ է ՎԱՀԱՆ :»  
 Յոյսի սոյ փոքրիկ նշոյլովն էր որ  
 ապրեցայ ամբողջ երեք շաբաթ՝ նոյն  
 յեմբեր 8ի Շարժումը կարողանալս յետոյ :  
 Եւ անկէ ի վեր ամեն անգամ որ  
 ցրուելը պար, իր ձեռքէն կը յափշ-  
 տակէի թերթ, նամակ, ինչ որ կար,  
 յուսալով վերջապէս կարգաւ սա-  
 բարեբաւտիկ լուրը. «Վահանը գեա  
 ողջ է» :  
 Ի դուր սակայն :  
 Անա նորէն պարսիկ գրուելը՝ իր  
 մաշած պայտասիկը անուրիս սակ :  
 — «Շարժումն կա՞յ :»  
 — Այո՛ :  
 Եւ ես սրտատարով կը յափշտակեմ  
 թերթերու և նամակներու տրցակը :  
 Պողով կը բանամ Շարժումը և ա-  
 ռալին նայուածքս կիյնայ, ափսոս,  
 ժխտն իրականութեան վրայ :  
 Ի՞նչն իրականութիւն, այո՛, այն-  
 քան դառն, որու նմանը գեա չէր  
 հաղորդած Շարժում՝ թանկագին Պե-  
 տի մահէն առիկն :  
 Արեւին ճիշդ է այլեւս, անողորմ  
 կերպով ճիշդ, որ ա՛լ չկա գեա,  
 Սիրելի ՎԱՀԱՆ, որ քու պաշտելի բե-  
 կորներդ են որ կան այժմ ու կը  
 հանգչին ու և՛ սեւ ժայռի  
 մէկ խոռոչին մեջ : Արեւին քու ա-  
 թիւնովդ ալ ներկուեցաւ այն ճամ-  
 բան, որու վրայ հայրենիքի ընտ-  
 բեալքոյն զաւակները քաղցին և ին-  
 կան :

Ու գուն որ գունէ գերեզման մըն ալ  
 չունեցար, քու անձանթ ու վայրի  
 խորշիդ մէջ՝ գուցէ գեա անսպառ  
 այն ժայտող շուրթիդ՝ ծաղրեցի՛ր մեզ  
 որ գեա կը շարունակենք մեռողնե-  
 րու վրայ լալ միայն :  
 Բայց ներքէ ինձ, իմ ազգոր Վահանս,  
 իմ արցունքներս ալ անկեղծ են այն  
 քան, որ քան ըլլոր քեզ սիրողներու  
 արցունքները : Մենք չենք կարող  
 չլալ քեզի չափ մաքուր հոգիի մը,  
 քեզի չափ անկեղծ ընկերի մը մահը  
 կարգաւոր :  
 Ես չեմ կարող չարաստուել երբ  
 ուստ ըստիս կորուստից սեւ լուրը  
 սփռու մէջ, նայուածքս պատկերիդ  
 վրայ՝ կը դիտեմ գիտուի ու սիրուել  
 զէ՛լիդ, պայծառ և անուշ աչքերդ,  
 լայն և անրիճ ճակատդ ու կը յիշեմ  
 մէկ կէ մէկ անցեալ այն օրերը որ  
 սեռայ քեզ, խաղաղայ հետը, քեզ  
 քեզի քայտերէք ու նստածք : Կը յի-  
 շեմ ինչպէս ճանչցայ քեզ, ճանչցայ  
 հոգիդ, ինչպէս պատմեցինք մեր մը-  
 տածու միտերն իրարու և ես ինչպէս  
 սիրեցի քեզ :  
 Կը յիշեմ ահա այն սենեակը, այն  
 սեղանը, որուն առջեւ գտայ քեզ  
 առաջին անգամ, երբ Ե... քաղաքի  
 հայ երիտասարդներէն շրջապատուած  
 քաղցր լեզուով, մեզմ ու համողիչ  
 ձայնով՝ կը խօսէիր հայրենիքի վեր-  
 կու թեան գործին զինուորակազմելու  
 գերադոյն պարտականութեան մասին,  
 այն պարտականութեան, որու համար  
 կենսեք տուիր : քու բոլոր արիւնջ  
 թափեցիր վերջապէս :  
 Կը յիշեմ, երբ Սև Մոզի գեղեցիկ  
 ափովը կը զօսուէինք միասին՝ կանանչ  
 ծառերու տակէն քաղցրով քով քովի :  
 լուսնեակի պայծառ շողերուն տակ՝  
 ալիքներու մըմունջներովն օրօրուած  
 և սերեւերու սոսափունովը հըմայ-  
 ուած քու մեզմ ու վշտալի ձայնովդ  
 կերպէիր :  
 Անուսեակի գիշեր թափառական քուն  
 չունիմ :  
 Անիճ տեսնողը կարծում է թէ տուն  
 չունիմ :  
 Եւ գուն որ քան կը սիրէիր այդ  
 երգը, և նա որքան յարտար էր քեզ :  
 Ի՞նչ իսկապէս ոչ տուն ունէիր այն  
 ժամանակ, ոչ քուն և ոչ ալ հաց  
 նոյնիսկ : Աղքատութեան բռնաւոր  
 ճիրաններուն մէջ կը ամենուէիք գրե-  
 թէ բոլորի, ստանց մէկուն զիմելու,  
 ստանց քու իրաւունքդ իսկ պահան-  
 ջելու :  
 Այդ բանը գիտէին ամենքը, գի-  
 տէինք ամենքս և ոչ ոք կողմէր քեզ  
 դժբախտ Վահան : Կը յիշեմ հիմա թէ  
 ինչպէս իրիկուն մը ու շատեն պա-  
 տանեցայ քեզ ծովափի պարտէզէն

վերադարձիս՝ գլուխդ կախ արտոււ  
 ախուր :  
 — Վահան, ընթրե՛ր ես :  
 — Առաջ հարցուր թէ ճաշե՞ր եմ :  
 Եւ հիմա որ այլեւս լուս ե՛ւ քեզ  
 համար բոլոր տառապանքներն ու  
 հրճուանքները ու դուն որ խուլ ես  
 անոնց համար, քեզ վրայ լալ պէտք  
 է արդեօք թէ նախանձիլ, քեզ որ  
 վարտեցար ճիշդ այնպէս, ինչպէս  
 պարտաւոր էր վարուիլ ամեն գիտա-  
 կից հայ, ամեն պարտաճանաչ մարդ :  
 Ի՞նչն թէ արդէն ի՞նչ որ անչունչ  
 լուսալից կէս ճանապարհին վրայ  
 գեա նպատակիդ շատած, բայց քու  
 թողած վրէժդ կապի գեա ինչպէս  
 որ կապիին բոլոր քու նմաններդ  
 թողածները :  
 Ի՞նչն թէ կը նմանին ամպերու,  
 որոնք կը սահին դանդաղ, կը կու-  
 տակուին հաղորա, բայց որ մը կու-  
 տան սնդագաճառ կայմակներ թա-  
 փելու համար հոն ուսկից գոյացան  
 իրենք :  
 Ձեր վրէժներն այ, ձեր արեան  
 գողորչներն կազմուած ամպերու նը-  
 ման, կը կուտակուին հիմա և պիտի  
 կուտակուին գեա՛ մինչեւ որ օր մը  
 պայթին վերջապէս իրենց շանթերով  
 այրելու և մոխրահոյտներու տակ  
 թաղելու համար բոնու թիւնն ու բըռ-  
 նակալները :  
 Եւ միայն այն ժամանակ պիտի  
 լուին բոլոր վրէժները, պիտի մարին  
 բոլոր հառապանքները և պիտի ծագի  
 եղբայրութեան և խաղաղութեան ա-  
 թեզակը հայկական հորիզոնի վրայ՝  
 իր ոսկի ճառագայթներով ողողիլու  
 համար հայրենաճուէր քայներու թան-  
 կագին փոշիները :  
 ՎԻՏԱ  
 Պարսկաստան

և թէ օտար մամուլի մէջ :  
 Հայր Գեորգիոյ Պետերբուրգի  
 մէջ թէ, իբր հոգեւոր ճեմարանի  
 ուսանող և թէ իբր արտոբող  
 բանասրկեալներ թանտի քա-  
 հանայ առիթ է ունենում մօտի-  
 կից ժանթեանայ գործաւորների  
 անտանելի կեանքի հետ և մանա-  
 ւանդ շատ մօտիկ յարաբերու-  
 թիւններ մէջ է մտնում այն  
 բաներների հետ, որոնք կազ-  
 մակերպելէին կուսակալութեան  
 գիտակցութեան լրտես պրօֆօ.  
 Կանոնը Չարստովի միջոցով Ա-  
 ուսնեքը նա այն կարծիքին է  
 լինում որ նիկոլայ ցարը տեղե-  
 կու թիւն չունի ոստ ժողովրդի  
 սարսափելի կազմութեան մասին և  
 բաներների գլուխ անցնելով ու-  
 զում է ցարին ներկայանալ, նա-  
 խապէս իրենց նպատակի մասին  
 գրաստի կերպով ցարին հաղոր-  
 գելով : Բայց երբ ցարի ստորհո-  
 գի պաշտօննաները Գապոնի կազ-  
 մած ու ցարին գիմոյ հանդիսա-  
 ւոր ու խաղաղ թափորին հրա՛-  
 ցանի են բռնում, այն ժամանակ  
 հայր Գեորգիոյ մի նոր թողուցիկով  
 յոյտարարում է որ ցարը դաւա-  
 ճանց իր պաւակներին և այլեւս  
 Յարի ու ժողովրդի մէջ ոչ մի  
 կապ չկայ, պէտք է կուսու միայն  
 կուսել : Բահանները զինուորա-  
 կանութեան հետ միասին եղել  
 են մինչեւ այսօր ցարի գլխի հա-  
 տատուն նեցուկը, ու այսօր քահա-  
 նան է որ ժողովրդին յայտարա-  
 բում է, թէ ժողովրդի կարող է  
 գրծել իր հայատարի՛մ հպատա-  
 կութեան երգումը դէպի ցարը և  
 նրա հետ վարվել այնպէս, ինչ-  
 պէս վարվում են իրենց պարտա-  
 կանութիւնները մոռացող հայ-  
 րերի հետ :  
 Պատմութիւնը այդ պիս կատակ  
 ներ սիրում է, պայտականութիւ-  
 նը խորտակելու համար պէտք է բ-  
 ւուտեր, նախկին պայական կը-  
 բոնաւոր, Սաւաւարով, իսկ ցա-  
 րի գլխը խորտակելու համար մէջ  
 տեղ են գալիս Գապոնները :  
 Հայր Գապոն մալտրօսս գիւղա-  
 ցու զաւակ է և իր մանուկ հա-  
 սակում եղել է հովիւ, գիւղական

### ՀԱՅՐ ԳԱՊՈՆ

Ուստական խոտով թիւնների  
 մէջ ամենատու շագրաւ կէտերից  
 մին էլ այն է, որ ցարին գլխող  
 զանազան պահանջներով բան-  
 ւորների պարագլուխ են հանդի-  
 գիւտացել երկու քահանաներ, ա-  
 ուսչիւր Գեորգիոյ Գաբոն, մի ե-  
 րիտասարդ մալտրօսս, իսկ մի-  
 սը հայր Սերգիոյ, մի տարեց քա-  
 հանայ Սերգիոյ սպանված է և նրա  
 մասին մանրամասն նկարագրու-  
 թիւններ պակասում են, իսկ Գա-  
 պոնի մասին կենսագրական ման-  
 րամասնութիւններ կան թէ ոստ





ասկացութիւն կը հասնի իր գարգայման այնպիսի մէկ աստիճանին, որ իր պրոպագանդայի ու գործունէութեան շնորհիւ չափազանց զիրար կը կրակի պօրեզագակէտ ազգեկէ հասարակական կեանքի վրայ՝ ահա ազգը շրջանին մէջ ներս կը սպրդի անդոյն ու անպէտ տարբեր, որոնք կը ջանան իրենց սեպհական միջավայրի հարկադրանքը, սկզբունքները տիրապետող դարձնել կուսակցութեան մէջ և ստեղծել գործունէութեան նորաձեւը հասանքները և որոպ. քաղաքական կուսակցութիւններու կեանքէն բաղմամբ օրինակներ կը բնանք թուել հոս սպայուցանելու համար մեր այս հայեցակէտի ճշտութիւնը: Ի՞նչ երկու երեք տարի առաջ էր որ ֆրանսական սօցիալիստ կուսակցութիւնը տեսնելով որ իր հիմնական սկզբունքներուն վտանգ կը սպառնան սօցիալիստական վերաբրու հագած կարգ մը անուղղաբար ժողովուն վճռական քայլ մը առաւ արտաքսելով դանոնք իր շարքերէն: Եւ այսօր, ան իր բուն հողին վրայ կանգնած՝ աւելի զօրեղ, նպատակաշարժար ու սխտեմամբ գործունէութիւն մը ունի որքան ալ իր կուսակցիցներու թիւը նուազած ըլլայ: որովհետեւ պէտք է գիտնալ որ կուսակցութեան մը գործունէութիւնը ասոր անդամներու քանակէն չի չափուիր՝ այլ անոնց որակէն: Միեւնոյն երեւթը տեղի ունեցաւ, զի անցեալին բը, պոլկար սօց. կուսակ. եան մէջ ալ:

Այսպիսի երկարատեւութիւններն ո՛ր թէ կազմակերպութեան մը ոյժերը շատելով վայն դէպի անկում կառավարողն, այլ ընդհակառակը, այդպիսի վերաբուժական գործողութիւններ Յեզ. Մարմին ոյժերը վերանորոգելով՝ միջոց կուտան անոր շնորհաւ կի ու աշխոյժ գործունէութիւն ունենալու:

Այս ընդհանուր տեսութիւններէն վերջը փութանք պ. Վարդօի շօշափած խնդիրներու մասին քանի մը դիտողութիւններ ընել եւ փակել մեր յօդուածը:

Նախ եւ առաջ դիտել պիտի տանք պ. Վարդօին որ իրեն ներկայացուցիչ մըցակից կուսակցութեան մը՝ չափազանց անքաղաքագիտական քայլ մը կառնէ հրապարակու. Հնչ. կուսակցութեան վերադրելով այնպիսի արարքներ, որոնք պարզ անհասկանալի նախաձեռնութեան արդիւնք են:

Այդպիսի ընթացք մը Ալֆարիտի մը կողմանէ հասկնալի է. բայց երբ հրապարակի վրայ Յեզակոսեանի եւ հրապարակագրի կրկնակի կոչումը ունենալ յաւանդող մէկը այդտեսակ թեթեւօրի վերաբերում մը կուսանայ գէպի Հնչ. կուսակցութիւնը՝ մենք, մեր անհրաժեշտ պարտականութիւնը կը համարինք հրաւիրել զայն, որ պատշաճութեան սահմանին մէջ մնայ: Հնչ. կուսակ. ընաւ չէ՛ խուսափած իր գործերուն պատասխանատուութիւնը ստանձնելէ. եւ ներկայ տագնապալի շրջանի մէջ ալ՝ կը շարունակէ ան ըլլալ յանդուգն ու անկեղծ եւ իր ներքին գործերու մասին ըրած կարգադրութիւններուն համար հաշիւ կուտայ միջոցներ իր ընդհ. ժողովին:

Պ. Վարդօ աւելի լաւ կընէր եթէ իր քարի խորհուրդները վերապահէր իր կուսակցութեան: Մենք ունինք մեր մէջ բաւական արժանաւոր ու կարող ոյժեր, որոնք թէ՛ իրենց փորձառութեամբ և թէ՛ յեղափոխ. գիտակցութեամբ ի վիճակի են յաջողութեամբ

կատարելու իրենց վրայ ինկած պատասխանատու դերը եւ բնաւ պէտքը չեն զգար զանրառնելու իրենց նախկին աշակերտներէն:

Պ. Վարդօն բարոյապէս ինկած ու մեռած կը նշակէ կուսակցութիւն մը, որ քաջութիւնը ունեցաւ իր շարքերէն արտաքսելու եւ հրապարակաւ նշաւակելու կարգ մը պորտաբոյժներ, որոնք անձնական շահագործումի առարկայ ըրած էին Յեզ. գործը: Երբ կազմակերպութիւն մը թոյլ չի տար որ իր ծոցին մէջ սնունդ առնեն ստոր ու գարշելի տիպեր, այդ մարմինը ամէն ժամանակ արժանի է ընդհանուր քննարկութեան ու համակրանքին: Հնչ. կուսակ. բերք չի կրնար պատասխանատու նկատուիլ իր անուշով գործումը զի զձեռնարկում, որովհետեւ ստոր հեղինակները այսօր վտարուած են իր շրջանակներէն եւ յանձնուած հայ հասարակութեան անողոք պատասանին:

Մենք հաւանութիւնը չունինք հոչակելու բոլոր հնչակեանները մէյ-մէյ հրեշտակներ կընդունինք որ Հնչ. կազմակերպութեան այլ եւ այլ խաւերուն մէջ սպրդին շարժասաններ ու խարերաներ, բայց այդ իրողութիւնը մեր կազմակերպութեան բարոյական նիւն արատ բերելու բնաւորութիւն չունի, այլ ան կապարտուած հայկական կեանքի ո՛ր աստիճան սպականուած ըլլաւ, որ ծնունդ կուտայ այդպիսի այլաբերուածներու:

Ինչո՞ւ սակայն պ. Վարդօն այնքան կը հետաքրքրուի հնչակեան «քրտան հազարներ» ու եւ ի՞նչ այնքան նախանձախնդիր է Յեզ. գործունէութեան մարքութեան — իրեն ներքին չի տար թիչ մը լուսարաններու հասարակութիւնը կողկալի մէջ հաւաքուած հարիւր հազարաոր բուրժուներու մասին:

Պ. Վարդօն կընայ հրապարակաւ խոստովանել ձեռքը խղճին վրայ զընելով, որ իր կուսակցութիւնը այնքան խիստ գոնուած է իր անարժան անդամներուն նկատմամբ, որքան Հնչ. կուսակ. ը:

«Ամէն բան մեր մէջ խեղդելու» քաղաքականութեան նետեղները աւելի կը շահին եթէ քիչ մը համեստ ըլլան եւ փոխանակ ուրիշ աչքին փուշը մասնանիշ ընելու՝ իրենց աչքին գերանք հանեն:

Հնչակեանները իրենց հակառակորդները եւ մրցակիցները ոչնչացնելու համար պ. Վարդօի երեւակայած «սխալէմ» ինչն հետեւած ու չեն ալ հետեւիր. եւ եթէ այդ տեսակ սխալէմ մը գոյութիւն ունենար՝ Հնչակեանները աստիկա նախ եւ առաջ պիտի գործադրէին Գաշտակեաններու դէմ՝ 1891-ին: Կրնայ «Շարժում» ի խմբագիրը այդ զտանցանքները հաստատող փաստ մը հրապարակել:

Մեր հակառակորդները միանգամ ընդմիջտ պէտք է գիտնան որ այդ տեսակ սօփիստութիւններով չէ որ պիտի յաջողին մեզ վարկաբեկ ընել հասարակութեան առջեւ եւ իրականացնել ստորինքի լիբեր իրենց փայտայած նպատակը — Հնչակեանութեան ոչնչացումը: Ընդհանուր, մեր թշնամիներուն այդ ջնդուխտական վարմունքը մեզի տուիթը պիտի ընծայէ դիմակազերծ ընելու ան արքայէմ անպետեղներ, որոնք գուրկ ո՛ւնէ արժանաւորութեան, որով կարենային հասարակութեան առջեւ հեղինակութիւն ու կշիւ ստանալ, իրենց բան գործ ըրալ ան կուսակցական կիրքեր յուզել ան այդպիսով յեղափոխական ազդիւ տարերու մեթոդներով արգելք ըլլալ Որքան ալ մենք համակիր ըլլայինք Յեզ. համերաշխ գործակցութեան եւ

հակառակ՝ կուսակցական վիճարանութեան այս եղանակին, այսու ամենայնիւ չէինք կրնար լուս մնալ այն սխալ փաստին առջեւ, որ Ալֆարիտներու վատկած դախիւնները սկզբում են իրանգրեկ կարգ մը «յեզափոխականներու» քունը:

Մենք կը բողջայինք որ մեր հակառակորդները փոխանակ ժողովուրդը անբարոյականացնելու եւ ստոր միտքը պղտերելու ընտրել ունեցող ճգնիմ խնդիրներ յուզելու հրապարակի վրայ փոխադրելին վիճարանութիւնը Ծրագրային սկզբունքներու հողին վրայ եւ յուզելին միեւնոյն ատեն յեղափոխական ստաբիլի վերաբերալ հարցեր, որոնց լուսարանութեան անվիճելիքն պիտի օգտուին ո՛չ միայն Հայ Յեզ. Ժողովուրդը, այլ նոյնիսկ զայն առաջնորդելու կոչումը ունեցող կարգ մը «զեկալարներ»:

Հայ Յեզ. մասուրը պէտք չէ կուսակցական զբեկի կիրքերու ապագայ դառնայ, անոր կոչումը շատ աւելի վեհ եւ բարձր է: Անոր նպատակն է սարձել Յեզ. Գաղափարը, բացատրել հայ ժողովուրդին իր ներկայ անտանելի վիճակին իսկական պատճառները, ցոյց տալ անոր այդ գրութեանն ազատելու վճռական ու կըստուակ միջոցները, բարձրացնել անոր բարոյականը, որպէսզի Յեզ. Գործունէութեան հետեւողք եղող անխուսփելի ձախորդութիւնները չի տկարացնեն անոր կուսուղ ոյժը, մէկ խօսքով, տալ հայութեան յեղափոխական առողջ գաղափարակութիւն մը, որ ազատութեան ճգնադ ժողովուրդի ամենամեծ առաքիտութիւնն է:

Համոզուած ըլլալով որ միմիայն այս եղանակով կրնանք հաւատարմութեամբ ու օգտակարապէս ծառայել Հայ տառապող ժողովուրդի դատին՝ մենք բոլորովին անուշադիր չեմք մեր հակառակորդներու կողմէ արձակուած թունալից սլոքները՝ կընթանանք մեր գծած ուղիով, մինչեւ որ յաջողին իրագործել Հնչակեան Ծրագիրը — Հայ ժողովուրդի քաղաքական եւ անտեսական լիակատար ազատութիւնը:

Կապար

**Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն**

**Շ Ա Ր Ա Թ Ա Վ Ա Ն Ք Ր Օ Ն Ի Կ**

Բանի մը օր առաջ Պուլկարիան մանուշակաբեր մը մատուցած էր Երուզ. Մեծ Պետութիւններուն՝ հրաւիրելով անոնց ուշադրութիւնը Թորթիոյ ընթացքին եւ վերնորակ պատրաստութիւններուն վրայ:

Միւս կողմէ Թուրքիան կը շարունակէ Պուլկ. սահմանապահութիւն վրայ կեդրոնացնել զինուորական ահապին ոյժ. միջոցաւ Պուլկարիան, գէթ աւերեւոյթ, ապագայի պատահականութեան առջեւ պատրաստ ըլլալու համար ունէ լուրջ ձեռնարկ ընել հետի է: Մտադուտ անգամուր աղէտի մը հեռապատկերը Պուլկարիոյ ժողովուրդը մատնած է անորոջ կայութեան մը եւ երկրին անտեսական կեանքը զգալի կերպով խանգարուած է:

Հակառակ սակայն այս երկու դալից նշաններուն՝ քաղաքական ներկայ պայմանները Թուրքիոյ եւ Պուլկարիոյ մէջ զինուորական ընդհարում մը հաւանական ընծայելէ հետի են: Թէ ինչ կարօրէն բացատրութիւն տալ թոյլ չի տար մեզ «Վերածնութիւն»-ի մէջ մեզ վերապահուած համոզումը: Միայն աւելցող չենք համարիր գիտնալ տալ որ մասնաւոր աղբիւրէ մեր ստացած ստույգ տեղեկութիւնները կուզան հաստատել այս ինչորոյ մասին մեր ունեցած կարծիքը:

Որպէսզի Թուրքիոյ մէջ կատարուած գործառնութիւն մը թրքական գրոյմը կընէ անպատճառ պէտք է որ կաշաքը իր առատ բաժինը ունենայ ասոր մէջ:

Անշուշտ մեր ընթերցողները կը իշխեն որ սակէ բաւական ժամանակ առաջ եւրոպական առաջնակարգ գրամական հաստատութիւնները — որոնց գլուխը կանգնած է Թուրքիան անխնայ կերպով շահագործող ազրուկ Պանթ-Սթամանը — կը ջանային թուրք պետութեան նպարտերուն միացումը կատարել: Այս մասին ֆրանսական արդի ելեմտական նախարար Ռուվիէն ընդարձակ ծրագիր մը կազմած էր որ քիչ փոփոխութիւններով ընդունեցաւ Թուրք կարավարութիւնը:

Բանակցութիւնները շատ երկար տեւեցին, բայց Թուրքիոյ գեաւարահաճ ըլլալուն պատճառները պէտք չէ վերաբրել Թուրք պետական անձնաւորութիւններու երկրին շահերուն աւելի նպատաստուր կարգադրութիւն մը ձեռք բերելու միտումին: Խնդրող զլլաւոր առարկան հրամայելիք պատահին չափը որոշուած վրայ էր եւ վերջապէս համաձայնութիւնը չուցաւ գոյանալ: Երբ ըզի մարդուկ երկար տատանումներէ վերջը՝ ստորագրեց Եւրոպայի տղուկներուն փութաքած իրահեւ... 240000 լիւրայի չնչին պահիչի մը փոխարէն՝ մաղթելով անշուշտ որ իր սիրած երկրին այսպիսի ծառայութիւններ մատուցանելու առիթներ աւելի յաճախ պատահին այստեւետեւ:

Ս Ա Վ Գ

Ն Ա Մ Ա Կ Ս Օ Ֆ Ի Ա Յ Է Ն  
(Մեր մասնաւոր քրքակցիկն)  
—  
Սօֆիա, 18 Յունիս, 1903:

Հեռագրական գործակալութիւնը չորս օրէ ի վեր սկսեց նորէն տագնապալից լուրեր տալ Մակեդ. շարժումներու մասին: Մայիս 30-էն միջեւ Յուն. 6 կատարուած են 17 ընդհարումներ Մակեդ. հրատակաւորներու և թիւրք կառավարութեան միջեւ, երեք Վիլայէթներու մէջ, որ երկու կողմէն ալ բաւական ինկածներ կան: Մակեդ. յեղափոխականները շատ տեղ պայլովուցիկ և ուսմբում կը կուտան. Թիւրք կառավարութիւնը վերջերս 153 պայլովուցիկ ունէր գտած է իր և Պուլկար սահմանագծին միջեւ Սաւա գիւղի մօտ:

Աւստր. և Ռուս. հիւպատուները, որոնք գացած էին Պէրէքէթի շրջակայքները Հիւլի փաշայի հետ, հոն գործուած խժժութիւններու մասին քննութիւն մը կատարելու համար, հաստատեցին թէ ատուց հեղինակները, նախ՝ Չէքի սահակապետը և յետոյ՝ թիւրք զինուորները եղած են: Աստեք զէնք փնտռելու պատրուակով մտած է գողութիւններ ու առեւանգումներ են ըրած:

Պուլկար կառավարութեան խրկած նօթայիկ ի պատասխան, Ի. Գուրը կը յաւասարէ թէ ոչ մի տեղեկագիր ստացուած չէ Սօֆիայէն՝ սահմանագրի վրայ կատարուած ընդհարումները ծանուցանող:

Ա. և զորոյցը թէ կառավարութիւնը մտադիր է մի քանի ցօրաբաժիններ իր գէն կոչել անձինն թէ կառավարութիւնը գիտատեթիւն ունի Բեօսթէնի շրջանին պահեստի զինուորներուն մէջ մասը զէնքի կոչել սահմանագրու իր զօրացնելու համար, և այսպիսով արդի իր կուսակց. փախտականներու գէպի ապրիլ պաղթելու, ինչպէս նաև զինուած խումբերու գէպի թիւրքաց կողմը անցնելը, որ վերջերս մեծ ծաւալ ստացած է:

Մ. Մ.

Отговорники: Степанъ Г. Степанянъ  
Печатница В. Н. Малджиевъ — Русе.